

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### «ԿԵՐՊԱՐԻՑ ԴՈՒՐՍ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ ՀՆՁԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ

Հաղորդման բնույթը պահանջում է այն վարել գրական հայերենով: Թեև հիմնականում այդպես է, սակայն հաղորդավարուհին հաճախ գործածում է ոչ գրական բառեր ու արտահայտություններ: Մասնավորապես՝ «ըսենց», «ըփենց», «ընենց» բառերը:

Մերժելի է, որ նա «է» օժանդակ բայի հետ միասին հավասարապես (եթե ոչ ավելի) գործածում է ա-ն:

Ամփոփագիրը կազմելիս բանավոր խոսքի առանձնահատկությունները, հարկավ, նկատի ունեցել ենք:

Մեկնաբանությունները չժանրաբեռնելու համար երբեմն նշած անճշտություններն ուղղել ենք՝ առանց այդ մասին խոսելու (օրինակ՝ ա-ախոսության դեպքերը):

Նկատենք, որ անճշտություն կա նաև հաղորդման անվանման մեջ, որտեղ «դուրս» բառը գրված է մեծատառով: Պետք է գրել այսպես. «Կերպարից դուրս»:

Ստորև ներկայացնում ենք նկատված սխալների օրինակները՝ հնարավորինս խմբավորած:

#### ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ինչի՞ մենք ունենք մեղքի զգացում ....» (10.10.2023), «Ես չեմ հասկանում՝ *ինչի՞*» (17.10.2023), «*Ինչի՞*, սիրելի դժվար *ա՛* դարձել» (19.12.2023), «Այ, *ինչի՞* ա կարևոր ....» (24.10.2023), «Բայց *ինչի՞* ա էդպես», (31.10.2023), «Իսկ *ինչի՞* չեն ուզում ....» (07.11.2023), «*Ինչի՞* ա անհրաժեշտ» (07.11.2023), «*Ինչի՞* ա կարևոր Ձեզ համար ....» (05.12.2023), «*Ինչի՞* եմ էս հարցը բարձրացնում» (12.12.2023):

Հաղորդավարուհին **ինչո՞ւ** դերանվան փոխարեն ավելի շատ գործածում է *ինչի՞* սխալ ձևը: Այս հանգամանքին հարկավոր է ուշադրություն դարձնել: Դա որևէ կերպ արդարացվել չի կարող:

«Ինձ ոչ ոք պետք չի» (10.10.2023), «Գաղտնիք չի, որ Ձեր եղբայրը ....» (24.10.2023), «.... սա վերջը չի» (14.11.2023), «Ձեզ համար էական չի ու հետաքրքիր չի զրույցը» (21.11.2023):

Բաղադրյալ ստորոգյալների կազմում կիրառվում է ժխտական ոչ թե չի այլ **չէ** ձևը: Այս սխալը նույնպես հաղորդավարուհու խոսքում հանդիպում է հաճախ:

Բերված բոլոր օրինակներում պետք էր գործածել **չէ**-ն:

«*Ասեցիք*, որ Հովիվուդում ....» (24.10.2023), «.... ու *ասեց*. «Դու երբեք դաշնակահար չես դառնա»» (31.10.2023), «*Ասեցիք*, որ թողել հեռացել եք ....» (21.11.2023), «Ի՞նչ Ձեզ *ասեցիք* ....» (19.12.2023), «Դուք շատ կարևոր միտք մի անգամ *ասեցիք* ....» (05.12.2023):

*Ասել* բայը թեև պատկանում է *ե* խոնարհման, սակայն անցյալ կատարյալ ժամանակաձևում կանոնական է նրա «*աց*» բաղադրիչով կազմությունը:

Ճիշտ են ***ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին*** ձևերը:

«Չի՞ *հոգնացնում* դա» (12.12..2023):

Պետք էր ասել ***հոգնեցնում***, քանի որ *հոգնել* բայը պատկանում է *ե* խոնարհման:

«Շատ լավ հումոր կար *իրա մեջ*» (19.12.2023), «Ի՞նչ են անում *իրանք* ....» (19.12.2023), «.... Թումանյանի հեքիաթները *իրանք* շատ տեղային ու շատ ....» (24.10.2023):

Նշված դերանվան այս ձևերը արդի գրական լեզվում ճիշտ չեն:

Պետք էր ասել ***իր, իրենք***:

Վերջին օրինակում նշված դերանունը նաև ավելորդ է, նրա գործածությունը՝ սխալ, որովհետև անձնական դերանունը չի կարող գործածվել առարկա ցույց տվող բառերի փոխարեն:

Կարելի էր ասել. «.... Թումանյանի հեքիաթները շատ տեղային ու շատ ....»:

«Այսինքն՝ *ինքը* բնականոն զարգացման արդյունք է» (21.11.2023, սերիալների մասին):

Սխալը նույն բնույթի է: Ինչպես ասվեց, անձնական դերանունները առարկա ցույց տվող բառերին փոխարինել չեն կարող:

Ճիշտ կլիներ ասել. «Այսինքն՝ **դրանք** բնականոն զարգացման արդյունք են»:

«Լավ, հողը *կորցրեցինք*, լավ, հայրենիքը *կորցրեցինք* ....» (14.11.2023), «.... ու նորից *կերցրեցիք* անկախությունը» (19.12.2023):

Պետք էր ասել **կորցրինք, կորցրիք**:

Պատճառական բայերի խոնարհման մասին Լեզվի կոմիտեն ունի հրապարակում: Առաջարկում ենք ընթերցել այն:<sup>1</sup>

## ՍԽԱԼ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

«Առաջինը *դա* մեղքի զգացումն է ....» (10.10.2023):

Հայերենում ենթակային կրկնող դերանուն գործածելը ճիշտ չէ:

Հարկավոր էր ասել. «Առաջինը մեղքի զգացումն է ....»:

«Մեր *մենթալիտետը մի քիչ այլ ա մեզ թելադրում* միշտ» (10.10.2023):

Կա ոչ միայն ձևակերպման անհարթություն, այլև օտարաբանություն:

Թերևս ճիշտ կլիներ ասել, օրինակ. «Մեր **մտածելակերպը մեզ միշտ մի քիչ այլ բան է թելադրում**»:

«Անչափ շնորհակալ եմ Ձեզ այս *խորը* ու հետաքրքիր *զրույցի* համար» (14.11.2023), «Շատ շնորհակալ եմ Ձեզ .... այս *խորը* ու հետաքրքիր *զրույցի* համար» (05.12.2023):

---

<sup>1</sup> Լեզվի կոմիտե. <http://www.langcom.am>, <http://tinyurl.com/3wkfk2mh>

Լեզվական առումով զրույցը խորը չի լինում: Կարելի էր գործածել, օրինակ, **խորհմաստ** բառը:

«Բայց **Ձեզ կարևոր ա՛**, որ Դուք վերահսկեք էդ ....» (21.11.2023), «**Ինձ հեղափոխիր ա՛** ի՞նչը Դուք չէիք ....», «**Ինձ հեղափոխիր ա՛** աշխատանքի հետ կապված ....» (24.10.2023), «**Ինձ չափազանց հաճելի էր** զրույցել Ձեզ հետ» (24.10.2023):

Բոլոր օրինակներում պակասում է **համար** բառը:

Ճիշտ կլիներ ասել. «Բայց **Ձեզ համար կարևոր է**, որ Դուք վերահսկեք դա ....», «**Ինձ համար հեղափոխիր է՛** ի՞նչը Դուք չէիք ....», «**Ինձ համար հեղափոխիր է՛** աշխատանքի հետ կապված ....», «**Ինձ համար շատ հաճելի էր** զրույցել Ձեզ հետ»:

«Ինձ թվում ա՛ շատերի **մոտ ա** էդ զգացումը» (07.11.2023):

Սխալն օտար լեզվի ազդեցության հետևանք է:

Ճիշտ կլիներ ասել. «Ինձ թվում **է՛ շատերն ունեն** այդ զգացումը»:

«Որովհետև կարծում եմ, որ երբ որ մայրերի հետ խոսում եք Դուք, փորձում եք **ինչ-որ ձև հետ կանգնել** ու ցույց տալ ....» (14.11.2023):

Հետ կանգնում են ոչ թե **ինչ-որ ձև**, այլ **ձևով, կերպով**:

Պետք էր ասել. «Որովհետև կարծում եմ, որ երբ մայրերի հետ խոսում եք Դուք, փորձում եք **ինչ-որ ձևով (կերպով) հետ կանգնել** ու ցույց տալ ....»:

«Ո՞նց եք էդ **համեմատությունը փանում**, զուգահեռները» (21.11.2023):

Զուգահեռները, այո՛, **փանում**, նաև **անց են կացնում**, համեմատությունը՝ ոչ:

Ճիշտ կլիներ ասել, օրինակ. «Ինչպե՞ս եք այդ **համեմատությունն անում, զուգահեռները փանում**»:

«Ե՞րբ **եկաք էդ գիտակցության**» (12.12..2023):

Գիտակցության, ճիշտ է, գալիս են, բայց տվյալ դեպքում խոսքը վերաբերում էր այլ բանի:

Ասելիքը կարելի էր ձևակերպել, օրինակ, այսպես. «Ե՞րբ **եկաք (հանգեցիք) այդ մտքին**»:

«Ու դրա համար չենք կարողանում այդ *տրամադրության վրա մտածել, կազմակերպել*» (19.12.2023):

Հասկանալի է, որ *տրամադրության վրա* ո՛չ մտածում, ո՛չ կազմակերպում են: Ասելիքը պետք էր ձևակերպել այլ կերպով:

## ՈՉ ԳՐԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Դուք *ըտենց* եք տեսնում աշխարհը» (24.10.2023), «Չկա՞ *ըտենց* բան, որ ուղղակի անում եք ....» (21.11.2023), «*Ինչի՞* եք *ըտենց* անում» (19.12.2023):

Ինչպես ասվեց, խոսակցական *ըտենց, ըտենց, ընենց* ձևերի գործածությունը գրական լեզվում ընդունելի չէ:

Պետք էր ասել. «Դուք *այդպես* եք տեսնում աշխարհը», «Չկա՞ *այդպիսի* բան, որ ուղղակի ....», «*Ինչո՞ւ* եք *այդպես* անում»:

## ՕՏԱՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

«*Ինչի՞ համար ա պետք դա Ձեզ անել*» (14.11.2023):

Այս միտքը հայերեն կհնչի, օրինակ, այսպես. «***Ինչո՞ւ է պետք, որ Դուք դա անեք***»:

«*Խնդիրը նրանում է, որ մենք չարությունն ու ....*» (05.12.2023):

Այսպիսի դեպքերում մենք ասում ենք. «***Խնդիրն այն է, որ ....***»:

«*Ինձ մոտ միշտ տպավորություն է, որ Դուք եք սովորեցրել իրենց լինել օգնող, լինել հարգող ....*» (05.12.2023):

Հաղորդավարուհին նշված սխալը կարճ ժամանակահատվածում կրկնում է երեք անգամ:

Հայերեն լեզվամտածողությամբ այս միտքը կձևակերպվի այսպես. «**Ես միշտ ունեմ այն տպավորությունը**, որ Դուք եք ....»:

«.... ասում եք՝ Արթուր **Գրիգորիչը** ....» (19.12.2023):

Այսպես որևէ մեկի մասին խոսում են ուսաները: Այս մասին շատ է ասվել: Սա հայերեն չէ և մեր լեզվում վերակենդանացնելու անհրաժեշտություն չկա:

Ի դեպ, հաղորդման հյուրը մինչ այդ Արթուր Գրիգորյանի մասին խոսում էր՝ տալով նրա անուն-ազգանունը, և միայն հետո, հավանաբար հետևելով հաղորդավարուհուն, սկսեց գործածել անուն-հայրանունը:

#### **ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«Տեսեք, Ձեր դպրոցը, փաստորեն, դպրոցները, *հա*, առհասարակ դպրոց երևույթը, *ըսենց* ասենք, *ինքը* պարի դպրոց *չի* միայն» (05.12.2023):

Սխալները մի քանիսն են, և քանի որ դրանց մասին (բացառությամբ ավելորդ *հա*-ի) վերևում խոսեցինք, ուստի միանգամից ներկայացնենք նախադասության ճիշտ տարբերակը. «Տեսեք, Ձեր դպրոցը, փաստորեն, դպրոցները, առհասարակ դպրոց երևույթը, **այսպես** ասենք, միայն պարի դպրոց **չէ**»:

«Ինձ համար *դա* յուրահատուկ դեպք է, որ երեխան էդ տարիքում հերիք *չի* հասկանա, *մի հայր* էլ հիանա օպերայով» (12.12.2023):

*Մի հայր* մակաբույծի մասին նույնպես Լեզվի կոմիտեն ունի հրապարակում, որը ևս հարկ ենք համարում ներկայացնել ձեր ուշադրությանը<sup>2</sup>:

Այստեղ ավելորդ է նաև *դա*-ն: *Չի*-ի փոխարեն էլ դարձյալ պետք էր ասել **չէ**:

<sup>2</sup> Լեզվի կոմիտե. <http://www.langcom.am>, <http://tinyurl.com/4xerdp4u>

Նախադասությունը ճիշտ կինչեր, օրինակ, այսպես. «Ինձ համար յուրահատուկ դեպք է, որ երեխան այդ տարիքում հերիք **չէ** (կամ՝ **բավական չէ**) հասկանա, **դեռ նաև (դեռ մի բան էլ)** հիանա օպերայով»:

«Նու, զգացի, որ էդ զգայունությունը հումորի վահան եք *մի հատ* սարքել» (19.12.2023):

Նույն՝ *մի հատ* ավելորդությանն այստեղ ավելացել է նաև «փոխառյալ» *նու* մակաբույծը:

Կարդանք նախադասությունն առանց այդ բառերի և կտեսնենք, որ դրանց «պակասից» այն միայն շահում է. «Զգացի, որ այդ զգայունությունը հումորի վահան եք սարքել»:

«Իսկ մենք, որպես ընդունող կողմ, այսպես ասած, *հա*, ի՞նչ ունենք անելու ....» (10.10.2023), «Լինում *ա* էդպես, *հա*, բայց հիմնականում ....» (17.10.2023), «Խոսեցինք, *հա*, Ձեր եղբոր ....» (24.10.2023), «Դուք խոսեցիք, *հա*, որ միայն պար *չի* ....» (05.12.2023), «Երբ ես ուսումնասիրում էի, *հա*, էս *ինտերվյուին* էի պատրաստվում ....» (07.11.2023):

Տվյալ օրինակներում *հա*-ն ոչինչ չասող, դարձյալ մակաբույծ բառ է: Նրանից նույնպես հարկավոր է հրաժարվել:

Զորրորդ նախադասության մեջ *չի*-ի փոխարեն դարձյալ պետք էր ասել **չէ**:

Վերջին նախադասության մեջ կա նաև օտարաբանություն. *ինտերվյու*-ի փոխարեն պետք էր գործածել **հարցազրույց** բառը:

## **ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«.... էդպիսի *քոմենթներ* գրեն ....» (17.10.2023):

Այս օտար բառը գործածելու որևէ պատճառ չկար: Մեր **մեկնաբանություն**-ը նրա իմաստն արտահայտում է ամբողջովին:

«Մերսի շատ» (17.10.2023), «Մերսի» (24.10.2023):

Ինչ խոսք, որ պետք էր գործածել հայերեն **շնորհակալություն** բառը:

«Դուք էլ ընդունում եք, որ էդ *պրոյեկտը* ... Ձեր ձախողումն *ա*» (24.10.2023):

Պրոյեկտ-ը հայերեն **նախագիծ**-ն է, **ծրագիր**-ը:

Հարկավոր էր գործածել այս բառերից որևէ մեկը:

«.... *ռեպերտուարը* չի թարմացվում պետական թատրոնների» (31.10.2023):

Այստեղ էլ նախապատվություն պետք էր տալ **խաղացանկ**-ին:

«.... ու շատ հետաքրքիր *ա* էդ *կոնտրաստը* ....» (31.10.2023):

Առաջարկում ենք նշված բառի փոխարեն այսուհետև գործածել **հակադրություն**-ը:

«.... ու հարց *ա* առաջանում, ի՞նչ, *մոնոպոլիա*՞ է այստեղ ....» (07.11.2023):

*Մոնոպոլիա*-ն հայերեն թարգմանվում է **մենաշնորհ** բառով: Պետք է գործածել վերջինս:

Լեզվական վերահսկողության բաժնի  
գլխավոր մասնագետ՝ Գուրգեն Միքայելյան